

## **ՄԱՍ 5. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

2007-2009 թվականների ընթացքում կշարունակվի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման գործընթացն, որը կարտահայտվի ինչպես միջազգային կազմակերպությունների, ազգային վիճակագրական ծառայությունների կողմից կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին և աշխատանքային հանդիպումներին մասնակցությամբ, այնպես և՛ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման և զբաղեցրած պաշտոններին համապատասխանության որոշման նպատակով իրականացվող վերապատրաստման և ատեստավորման, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ գործընթացներով: